ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Ձեզ վստահված ժողովուրդն է
գանձը ձեր և այնտեղ են ձեր սրտերը»:
(Գարեգին Բ Կաթողիկոս)

Հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, եպիսկոպոսներ ձեռնադրվեցին և օծվեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը և Կանադայի հայոց թեմի նորընտիր առաջնորդ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը:

Նախորդ օրը, հունիսի 21-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, Իջման Ս. Սեղանի առջև ընծայացուները հանդիսավոր կերպով ընթերցեցին և ստորագրեցին երդումնագրեր՝ի հավատարմություն իրենց եպիսկոպոսական ուխտին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը:

Կիրակի օրը պատարագիչ Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Ս. Ստեփանոսի Խորանին տեղի ունեցավ ընծայացու եպիսկոպոսների հավատքի ճշմարիտ դավանության քննության կարգը:

Ըստ ընդունված կարգի, եկեղեցական նվիրապետական աստիճանների ներկայացուցիչներ՝ դպիրներ, սարկավագներ, քահանաներ, ինչպես նաև ժողովրդի տարբեր խավերը ներկայացնող երկուական աշխարհականներ, մոտենալով Վեհափառ Հայրապետին, իրենց վկայությունը բերեցին ձեռնադրվող եպիսկոպոսների մասին: Ապա Նորին Սրբությունը հաստատեց ընծայացուների վկայագրերը և նրանց շնորհեց եմիփորոններ:

Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: Ընծայացուները, ծնկաչոք դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան բոլորանվեր ծառայության:

Ընթերցելով աղոթքներ Ձեռնադրության Մաշտոցից՝ Նորին Սրբությունը նրանց վարդապետությունից կոչեց եպիսկոպոսության: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց ընծայացուների ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները, ապա նրանց հանձնվեցին նաև եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշները՝ եպիսկոպոսական գավա-

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է Տ. ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄԷ Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅ ՂԱԶԱՐԱՊԱՏՈՒՄ ԿՏՐԱՍ ՄԱՍԻՆ

ՇՀԳՐՈՒՍԼԱՄԻՆԻՆԳ ՁՈՒՄՄՈՒ ԿՍԽՀՋ
ՊՈՒՅՆՈՏՈ ՀՅՐՈՒՆՅՈՒՄԻՆՈՒ ՊՈԽՈՒԿՈՒՄՈՒՆՈՒ ԿՏՅԱՆՈՒՅՅՈՒՆ ՄՈՓՈՒԹՅԱՆ ԺՈՒՄՍԳԸ

զաններ ու մատանիներ: Օծման ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաոծ եպիսկոպոսներին:

«Ձեզ վստահված ժողովուրդն է գանձը Ձեր և այնտեղ են Ձեր սրտերը: Հիրավի, արժեքների փլուզման ու կորստի, բայց միաժամանակ, արժեքների վերագտնումի ու հոգևոր զարթոնքի մեր ժամանակներում սիրտ է պետք, սիրող, զոհաբերվող, Քրիստոսասեր սիրտ, որ սրտեր բոցավառի, հոգիներ ներշնչի ու առաջնորդի: Նոր խոսքեր չէ, որ պիտի ասեք, նոր ճանապարհ չէ, որ պիտի ցույց տաք, բայց Ձեր կյանքով ու բարյաց գործերով Ավետարանի խոսքը պիտի նորանա և հավատի ճանապարհը պիտի նորոգվի այն թեմերից ներս, որոնց առաջնորդներ կարգվեցիք»,- ասաց Նորին Սրբությունը: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ նորաոծ եպիսկոպոսները, իբրև թեմական առաջնորդներ, կծառայեն իրենց հոտին՝ հավատարիմ պահելով նրանց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայրենիքին ու հայրենյաց ժառանգությանը:

Եկեղեցական արարողությունից հետո, ի պատիվ նորընծա եպիսկոպոսների, Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն: Վեհափառ Հայրապետը նորաոծ եպիսկոպոսներին հանձնեց եպիսկոպոսական պանակներ:

Արարողությանը ներկա էին Ս. Էջմիածնի միաբան հայրեր, բազմաթիվ հավատացյալներ, որոնց թվում՝ Կանադահայոց, ԱՄՆ հայոց Արևմտյան ու Վիրահայոց թեմերից ժամանած թեմական խորհուրդների ատենապետերը և այլ ուխտավոր թեմականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ